Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ծակքար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (6 դասաժամ, տղաների և աղջիկների խումբ), ֆիզկուլտուրայի (10 դասաժամ), ռուսաց լեզվի (27 դասաժամ), քիմիայի (15 դասաժամ), հայոց լեզվի (5 դասաժամ), գրականություն (2 դասաժամ), կենսաբանության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ) թափուր աշխատատեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. օգոստոսի 31-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. սեպտեմբերի 16-ին՝ժամը 15:00-ին** Ծակքար գյուղի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ գյուղ Ծակքար 1-ին փողոց 16 շենք: Տեղեկությունների համար զանգահարել 077-01-01-04 հեռախսահամարով: